ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
15.07.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 9 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Մ.Գասպարյանը, Ն.Վարդանյանը,Ն.Բաբայանը,

Տ. Եփրեմյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանչյանը, համայնքի գլխավոր խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները, բնակելի տները, բնակելի տարածքները և հանրակացարանային բնակելի շենքերի բնակարանները նվիրատվության եղանակով օտարելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 92 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5. Չարենցավան համայնքի 2022 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

9. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-015-0051-0001 ծածկագրով 0,01877 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -9 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

/Զեկ. Գ.Անտոնյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի., ***առաջարկում եմ***, ի գիտություն ընդունել Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Անտոնյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 4-րդ թաղ., 20 շենքի 38 բն. բնակիչ ***Շուրիկ Ռուբենի Գևորգյանի*** 2022 թվականի հունիսի 27 -ի թիվ 2621-16, և Արզական գյուղի Բարեկամության 63 բնակիչ ***Թաթուլ Հարազատի Հովհաննիսյանի*** 2022 թվականի հուլիսի 13-ի թիվ 2947-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Շուրիկ Ռուբենի Գևորգյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Թաթուլ Հարազատի Հովհաննիսյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները, բնակելի տները, բնակելի տարածքները և հանրակացարանային բնակելի շենքերի բնակարանները նվիրատվության եղանակով օտարելու մասին:

/Զեկ.Հ.Ղազանչյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները, բնակելի տները, բնակելի տարածքները և հանրակացարանային բնակելի շենքերի բնակարանները կարող են Չարենցավան համայնքի ավագանու որոշմամբ սեփականության իրավունքով նվիրատվության եղանակով օտարվել այլ անձին (անձանց) կամ ընտանիքներին, որոնք՝

1. «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» և «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» օրենքներին համապատասխան հանդիսացել են սեփականաշնորհման (մասնավորեցման) սուբեկտ կամ վարձակալ, դրանց գործողության ժամանակահատվածում չեն սեփականաշնորհել (մասնավորեցրել) իրենց բնակարանները կամ բնակելի տները, ներկայումս հաշվառված ու մշտապես (փաստացի) բնակվում են այդ բնակարաններում, բնակելի տներում կամ հանրակացարանայիբ բնակելի շենքերի բնակարաններում.
2. Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական այլ մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և կարգադրությունների կամ պետական մասնակցությամբ ընկերությունների (պետական ձեռնարկությունների) կողմից տրամադրված օրդերների (այլ փաստաթղթերի) կամ սահմանված կարգով ուժի մեջ մտած դատական ակտերի հիման վրա մշտապես (փաստացի)բնակվում են դրանցում.
3. Վերաբնակեցվել են վթարային քանդման ենթակա շենքերից և նոր տրամադրված բնակարանները տիրապետում և օգտագործում են՝ պայմանագրերին համապատասխան.
4. 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած այն անձանց, ովքեր բնակարաններում, բնակելի տներում, բնակելի տարածքներում և հանրակացարանային բնակելի շենքերի բնակարաններում բնակվում և հաշվառված են (այդ թվում փաստացի) 10 /տասը/ տարվանից ավելի.
5. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակարաններում, բնակելի տներում, բնակելի տարածքներում և հանրակացարանային բնակելի շենքերի բնակարաններում 15 /տասնհինգ/ տարի և ավելի բնակվում /բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է, որպես սեփական գույք/ և հաշվառված են դրանցում (այդ թվում փաստացի):
6. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2010 թվականի հունվարի 19-ի «Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով օտարելու համաձայնություն տալու մասին » թիվ 08-Ն որոշումը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. ***Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 92 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:***

/Զեկ.Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի նախաձեռնող խմբի 2022 թվականի ապրիլի 05-ի թիվ 1407/04 դիմումը.***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 92 որոշման 13.1-րդ հավելվածը (Չարենցավան համայնքի «Գառզուի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 2022թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը) լրացնել 24-րդ տողով՝ ***«Ռազմահայրենասիրական խմբի խմբավար»*** հաստիքային անվանումով, «ընդամենը» տողի ***«72»*** թիվը փոխարինել ***«73»*** թվով, ***«7530000»*** թիվը փոխարինել ***«7630000»*** թվով :

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. ***Չարենցավան համայնքի 2022 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:***

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման պահանջներով՝, ***առաջարկում եմ.*** Տալ համաձայնություն Զարենցավան համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Զարենցավան համայնքի 2022 թվականի հողային հաշվեկշռի վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ և 76-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ.***
1. Թույլատրել Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարել և վարձակալությամբ տրամադրել՝ համաձայն հավելված N 1-ի, N 2-ի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝, ***առաջարկում եմ.***
Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8 Համայնքային սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացու կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտերը.***առաջարկում եմ.*** Համայնքային սեփականություն հանդիսացող Վահե Գինոսյանին վարձակալությամբ տրամադրված 07-037-0202-0032 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակության փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-015-0051-0001 ծածկագրով 0,01877 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-131 եզրակացությունը. ***առաջարկում եմ.*** Համայնքային սեփականություն հանդիսացող 07-015-0051-0001 ծածկագրով 0,01877 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքերի նպատակային նշանակությունը համարել փոխված **որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:**

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ